

ՇԱՂԿԱՊԻ ԿԱՏԵԳՈՐԻԱՆ ԳՐԱԲԱՐՈՒՄ

Պ. Ե. ՇԱՐԱԲԵԱՆՅԱՆ

Ա

Որպես բառերի առանձին խումբ հնուց ի վեր տարբեր լեզուների քերականությունների մեջ շաղկապները խոսքի մասերի համակարգում առանձին տեղ են բռնում: Հին հույները քերականական գիտության սկզբնավորման շրջանում ընդունում էին երեք խոսքի մաս՝ անուշ, բայ, շաղկապ¹, որոնց վրա հետագայում ավելացրին նաև մյուս խոսքի մասերը: Ուրիշ լեզուների քերականություններում, որոնց վրա հենց սկզբից ուժեղ է եղել հունական քերականական գիտության ազդեցությունը, նույնպես շաղկապներն առանձին խոսքի մաս են համարվում: Ընդհանուր առմամբ շաղկապները բնորոշվում են իբրև այնպիսի բառեր, որոնց պաշտոնն է բառեր (նախադասության անդամներ) ու նախադասություններ կապակցելը: Թեպետ ուշ շրջանում (XIX—XX դարերում) ընդհանուր լեզվաբանական դիրքերից մոտեցող հնդկականներից ոմանք զանազան փաստարկներով վիճարկում են շաղկապի, ինչպես և մի քանի ուրիշ բառային կատեգորիաների, առանձին խոսքի մաս լինելու հարցը², սակայն այնուամենայնիվ կոնկրետ լեզուների քերականությունների հնդկականները, որոնց համար բառերի մանրամասն դասակարգումը միշտ էլ պրակտիկ պահանջ է եղել, շաղկապները խոսքի մասային առանձին և ինքնուրույն առումով են դիտում:

Մեզ համար այստեղ կարևոր է այն հարցը, թե լեզվից որպես շաղկապ անջատված բառերն ունեն արդյոք այնպիսի առանձնահատկություններ, որոնցով տարբերվեն բառային մյուս կատեգորիաներից: Այս տեսակետից մոտենալով հարցին տեսնում ենք, որ շաղկապների իսկապես հատուկ են այնպիսի բնորոշ ու տարբերիչ գծեր, որոնցով նրանք առանձնանում են մյուս բառախմբերից՝ գոյականներից, ածականներից, բայերից և այլն, և կազմում են բառերի մի առանձին խումբ: Այդ առանձնահատուկ գծերը մի քանիսն են, որոնցից ամենակարևորը շաղկապի կատարած դերն է խոսքի մեջ: Խոսքի մասերի համակարգում շաղկապներն առանձնանում են նախ և առաջ իրենց յուրահատուկ կապակցական դերով, որի հետ կապված են նաև մի շարք այլ առանձնահատկություններ:

Բառային ամենակական հատկանիշներից մեկը, որ առաջին իսկ հայացքից աչքի է ընկնում շաղկապների մեջ, վերաբերում է նրանց իմաստային կողմին: Իմաստի տեսակետից լեզվի բոլոր բառերը բաժանվում են երկու մեծ խմբի՝ ա) նյութական իմաստ ունեցող բառեր, բ) նյութական իմաստից զուրկ բառեր: Վերջիններս իրենց յուրահատուկ դերի պատճառով կոչվում են սպասարկու լրանք, դրանք են՝ կապերը, շաղկապները, որոշ լեզուներում նաև հոգերը:

Նյութական իմաստ ունեցող բառերին իրականության մեջ համապատասխանում են կոնկրետ իրեր, երևույթներ, հատկանիշներ և այլն, իսկ սպասարկու բառերին իրականության մեջ այդպիսի կոնկրետ իրեր, երևույթներ և այլն չեն համապատասխանում: Նրբ մենք ասում ենք սեղան, կապույտ, արագ, վազել և այլն, այսպիսի բառերից յուրաքանչյուրը մեր մեջ առաջացնում է մի կոնկրետ պատկերացում իբրև առարկա, հատկանիշ, գործողություն և այլն: Բայց երբ ասում ենք և, քե, բայց, իսկ, լատ, համար, մասին և այլն, այս բոլորովին այլ բնույթի պատկերացում է առաջանում մեր մեջ, սրանց իմաստը նյութական, առարկայական չէ, սրանք արտացոլում են ոչ թե արարածի աշխարհի ռեալ իրերը, երևույթները, հատկա-

¹ Античные теории языка и стиля, М.—Л., 1936, էջ 22 և 118:

² Տե՛ս Вандриес, Язык, М., 1937, էջ 114:

Նիշները և ալին, այլ դրանց միջև Լըաժ կապը, դրանց՝ իրար նկատմամբ ունեցած հարաբերու-
թյունները:

Ելուժական իմաստ ունեցող բառերը, որքան էլ որ զրանք բազմիմաստ լինեն, այնուամե-
նայնիվ կոնտեքստից զուրս առանձին գործածվելով արտահայտում են որոշ առարկայական, շ-
շոշափելի իմաստ կամ իմաստներ։ Բայինչև շաղկապի նշանակությունը, միևնույնիսկ այդ շաղ-
կապը մենիմաստ լինի, կոնտեքստից զուրկ մնում է շատ անորոշ ու վերաբերական ե կոնկրետա-
նում է միայն կոնտեքստում։ Ուրիշ բառերի կապակցությունն մեզ է այդ կերպ է դրսևորվում։

Ուրեմն շաղկապները նյութական կոնկրետ իմաստից զուրկ են և արտահայտում են վերացական իմաստներ: Ի՞նչ իմաստներ են դրանք, Դրանք առարկաների, հատկանիշների, գործողությունների, եղելությունների, երևույթների միջև եղած փոխհարաբերությունները նշող իմաստներ են. ցույց են տալիս նշված կոնկրետ հասկացողությունների միջև եղած կապը, հարաբերությունը. շաղկապները հարաբերություններ են արտահայտում: Այդ հարաբերություններն ընդհանուր զաղափարի բնույթ ունեն և բազմատեսակ են: Եթե բառերով արտահայտելու լինենք, ապա կարելի է ասել, որ շաղկապներն արտահայտում են մոտավորապես հետևյալ բնույթի հարաբերություններ՝ միավորություն (բաղչույսում), տրոհություն ((բաժանում), հակադրություն, բացառություն, մեկնություն, պատճառ, նպատակ, հետևանք, հիմունք, հակառակ հիմունք, պայման և այլն: Սրանք ամլև կամ պակաս չափով վերացական հարաբերություններ են և ի տարբերություն բառերի նյութական իմաստի՝ կոչվում են վերաբերական իմաստներ և մտնում են ևերականական իմաստներ ընդհանուր հասկացողության տակ:

Նյութական իմաստից զուրկ լինելը և յուրահատուկ քերականական իմաստներ արտա-
հայտելը, ինչպես և կապակցական ստանձնահատուկ դերը նկատի ունենալով՝ շաղկապների
մյուս սպասարկու բառերի հետ միասին տալիս են զանազան անվանումներ՝ քերիմաստ բառեր,
ի հակադրություն նյութական իմաստ ունեցող բառերի, որոնք կոչվում են լիիմաստ բառեր,
բառ-մասնիկներ, երկուողական խոսքի մասեր, ի տարբերություն նիմանական խոսքի մասերի²,
խոսքի մասնիկներ, ի տարբերություն խոսքի մասերի³, ձևական բառեր, օժանդակ բառեր⁴
և այլն:

Չպիտոր է կարծել, թե նշված Հարաբերությունները միայն շաղկապներով կապող են արտահայտվել: Շաղկապներն այդ Հարաբերություններն արտահայտելու միջոցներից միայն մեկն են, երբեմն նաև կարևորագույն միջոցը: Ոչ միայն տարբեր լեզուներում, այլև հենց միևնույն լեզվում նշված Հարաբերությունները ու ուրիշ վերաբերական իմաստներ արտահայտելու համար բացի շաղկապներից գործածվում են նաև ուրիշ ձևաբանական միջոցներ՝ նախդիրներ և նախադրություններ (կապեր), դերբայներ, հոլովներ և այլն: Լեզուն երբեք չի սահմանափակվում քերականական որևէ իմաստի արտահայտման սուկ մեկ միջոցով: Այսպես, նպատակային հարաբերությունը բացի զի, ուրպիս զի և այլ շաղկապներից ուրիշ միջոցներով ու ձևերով ևս կարելի է արտահայտել. օրինակ՝ «Մհառայիկ էլ սերմանող սերմանել» (Մարկ., Դ, 3), «Եւ կապեցիք գայլ խրճուսն առ ի յայրել» (Մատթ., ԺԳ, 30), «Եթէ տացի ինձ Տէր հաց ուտելոյ և հանդերձ զգնելոյ» (Յովհաննու Ոսկերեարաի մեկնություն թղթոցն Պաղոսի, Վենետիկ, 1862, և հաս., էջ 337): Այս երեք նախադասություններում էլ առկա է նպատակային հարաբերությունը. առաջինում այն արտահայտված է սուկ անորոշ դերբայով (սերմանել), երկրորդում անորոշ դերբայի հետ նոս ևս ի նախդիրներով, իսկ երրորդում՝ անորոշ դերբայի սեռական հոլովով: Դրդի հայերենում ևս հնարավոր է միևնույն հարաբերության արտահայտման այս բազմաձևությունը. օրինակ՝ «մի ձեռքով նա զլիխն բռնած էր մի մեծ հովանի մանր անձրից պաշտպանվելու համար» (Շիրվ., Երկեր, հ. 2, էջ 224—որ պաշտպանվի), «նստեց լուսամուտի առջև յուր անիկոյի մասին մտածելու» (Շիրվ., Երկեր, հ. 2, էջ 304—որ, որպեսզի յուր անիկոյի մասին մտածի):

Իմաստային որոշ նրբերանգային տարբերությամբ Լրբեմն գործիական հոլովի հետ դրված Բանդերա նախադրությունը կարելի է փոխարինել և շաղկապով, ինչպես օրինակ՝ «և այսու գորությունամբ աբարչություն տատուծոյ զեռան մանունն հանդերձ մեծամեծովք» (Բարսեղի Վեցօրեայք, էջ 139), «Որ խղրկ զտէր գաղկ զգիտութիւն արդարութեամբ հանդերձ» (Սեպակք, էջ 139)։

¹ Ի. Գ. Աղաջան, Հեղվարանության ներածություն, Երևան, 1952, էջ 200:

² Գ. Սևակ, *Փամանակակերպ հայոց լեզվի դասընթաց*, Երևան, 1955, էջ 249—250:

³ Մ. Արեղյան, Հայոց լեզվի տեսություն, Երևան, 1931, էջ 130, 131:

⁴ В. В. Виноградов, Русский язык, М.—Л., 1947, т. 9, 15, 30 и 31.

ժ. 6), որոնք եթե շաղկապով փոխարինենք, կստանանք հետևյալ ձևը՝ դեռան մանուկն և մեծամեծն, դոց՝ զգիտություն և զարդարություն: Նույնիսկ կարելի է զուգադրությունների մի շարք կազմել շաղկապին զուգահեռ տարբեր միջոցներով արտահայտվող հարաբերություններ համար, այսպես.

1 { «Եւ նա առ շժուժալ պարտութեանն զեղով անձին արարեալ սատակէր» (Եսեբի Պամփիլեայ Կեսարացոյ ժամանակականք, Վենետիկ, 1818, էջ 352):
Եւ նա Բանգի շժուժայր պարտութեանն զեղով անձին արարեալ սատակէր:

2 { «Յաղօթս կացէք շմտանելի քի փորձութիւն» (Ղուկ., ԻԲ, 40):
«Կացէք յազօթս զի մի՛ մտանիցէք քի փորձութիւն» (Ղուկ., ԻԲ, 46):

3 { «Զի ասէին զնա այլ քնախի լինել և համեստ յամենայնի» (Մովսիսի Խորենացոյ Պատմութիւն Հայոց, Տիգրիս, 1913, էջ 154):
Զի ասէին թէ նա այլ քնախի է և համեստ յամենայնի:

4 { «Ո՛չ դիտէք, զհրէշտակս դատիմք: Թող թէ զաշխարհականս» (Յովհաննու Ոսկե-
բերանի յաւետարանագիրն Մատթէոս, Վենետիկ, 1826, էջ 428):
«Ո՛չ զդիտէք եթէ զհրէշտակս դատիմք, Թող թէ զերկրաւորս» (Ա. Կորնթ., Զ, 3):

5 { Որդի իմաստուն ուրախ առնէ զհայր, որդի անմիտ արտմութիւն է մօր:
(Առակք, Ժ, 1):
Որդի իմաստուն ուրախ առնէ զհայր, իսկ որդի անմիտ արտմութիւն է մօր:

Սակայն, եթե տարբեր միջոցներ օգտագործելիս արտահայտվող հարաբերությունները նույնն են մնում, ապա փոխվում է նախադասության կառուցվածքը: Բերված զուգադրություններից առաջինում պատճառի հարաբերությունը նախորդով ու անորոշ դերբայով արտահայտվելիս ուսացվել է պարզ նախադասություն, իսկ շաղկապով արտահայտվելիս՝ մի բարդ նախադասություն, նույնն է և երկրորդ ու երրորդ զուգադրություններում: Վերջին երկուսում միայն, որոնց մեջ որպես շաղկապին զուգահեռ միջոց օգտագործված է շաղկապի սոսկական բացակայությունը, նախադասությունների կառուցվածքը չի փոխված շաղկապի բացակայությունից և առկայությունից: Սա ցույց է տալիս, որ միևնույն հարաբերությունը թեպետ կարելի է շաղկապին զուգահեռ նաև այլ միջոցներով արտահայտել, բայց դա կատարվում է նախադասության կառուցվածքի փոփոխությամբ, բացառություն է կազմում շաղկապի սոսկական բացթողումը կամ անշաղկապ կապակցությունը: Շաղկապով արտահայտվող հարաբերության զեպքում ունենք խոսքի շարահյուսական կառուցվածքի մեկ տիպ, իսկ նույն հարաբերության՝ դերբայով, նախորդով, հոլովով արտահայտվելու դեպքում՝ մի այլ տիպ: Այստեղից հետևում է, որ շաղկապներն ունեն վերաբերական իմաստներ արտահայտելու իրենց հատուկ ձևեր, եղանակներ:

Նշված վերաբերական իմաստները շաղկապներն արտահայտում են ոչ թե ինքնին, իրենց մեջ, այլ միայն կապակցված խոսքի մեջ: Նրանց իմաստները բառերի կամ նախադասությունների՝ իրար նկատմամբ ունեցած հարաբերություններն են, այսինքն այն, թե այդ բառերը, նախադասությունները և այլն, ինչպիսի՞ կապակցության մեջ են գտնվում իրար նկատմամբ, ինչպիսի՞ փոխադարձ առնչություն ունեն: Իսկ այդ կապակցությունը՝ բառերի, նախադասությունների իրար նկատմամբ ունեցած փոխհարաբերությունը դրսևորվում է քերականորեն որևէ ձևով՝ առանձին բառերով, բառերի թեքման միջոցով, շարահյուսությամբ և այլն: Եվ քանի որ շաղկապները խոսքի մեջ կապակցական հարաբերություններ են նշում, որ նշանակում է, թե կապակցական դեր են կատարում, ուստի ունեն զուտ քերականական արժեք: Վերը բերված օրինակներից «Կացէք յազօթս քի մի մտանիցէք քի փորձութիւն» նախադասության մեջ զի շաղկապն ունի նույն արժեքը, ինչ որ «եթե տացէ ինձ Տէր հաց ուտելոյ և հանդերձ զգնելոյ» նախադասության մեջ անորոշ դերբայների սեռական հոլովը: Իրենց այս կողմով՝ իմաստային առանձնատկություններ, շաղկապները նույնիսկում են քերականական արտահայտության ուրիշ միջոցների հետ:

Իսկ ի՞նչ են կապակցում շաղկապները և ինչպես: Սովորաբար ասվում է, թե դրանք կապակցում են նախադասության համադր առիթներ և նախադասություններ: Անհրաժեշտ է որոշ չափով պարզաբանել այս հարցը:

Նախադասության անդամների կապակցություն կատարում են ոչ միայն շաղկապները, այլև կապերը (նախդիր և նախադրություն), բայց այստեղ երևան է գալիս սպասարկու բառերի այս երկու խմբի ոչ միայն նմանությունը, այլև էական տարբերությունը: Կապերի առանձնահատկությունն այն է, որ նրանք կապակցում են լրացումն իր լրացյալի հետ, հատկապես ստորոգյալն իր լրացման (խնդրի կամ պարագայի) հետ. օրինակ՝ «Յայժմ ես վասն քո յաշտ առնէի, յայմ հետէ դու վասն իմ առնիցես (եզնիկ, էջ 80)», «Կարելի էր կարծել, որ նա պճնվել է մի փառավոր հանդիսի համար» (Շիրվ., Երկեր., հ. 2, էջ 227): Այս օրինակներում վասն և համար կապերը ստորոգյալին են կապել: Բոլոր և հանդես անուղղակի խնդիրները: Նախդիրներն ու նախադրություններն իրագործում են լրացման (խնդրի, պարագայի) և լրացյալի (ստորոգյալի) կապ նախադասության անդամների միջև. այսինքն՝ նշում են նախադասության անդամների կախման հարաբերությունները: Այնինչ շաղկապները նախադասության ոչ համազոր անդամները՝ լրացումն ու լրացյալը չեն կարող կապակցել, նախադասության ներսում նրանք կապակցում են միայն համազոր միավորները: Այս առումով կապերին որոշ չափով մոտենում են ստորադասական շաղկապները, որոնք իրագործում են գլխավոր և երկրորդական նախադասությունների, այսինքն՝ լրացման և լրացյալի կապը, սակայն դարձյալ սրանց միջև մնում է այն տարբերությունը, որ կապերը լրացման և լրացյալի, այսինքն՝ կախման հարաբերություններ նշում են նախադասության ներսում, նրա անդամների միջև, իսկ շաղկապները՝ նախադասությունների միջև: Եթե մենք փորձենք մի որևէ հարաբերություն արտահայտելիս կապը փոխարինել շաղկապով, այդպիսի փոխարինումը իհարկե հնարավոր է ոչ ամեն անգամ, ապա այդ դեպքում պետք է փոխենք նախադասության կառուցվածքը, օրինակ՝ «Եւ Զրուանն առ ի չլընդլ զոխտն տէր ցկրհմնն» (Եզնիկայ վարդապետի Կողբացոյ եղծ աղանդոց, Քիֆլիս, 1914, էջ 80): Այստեղ արտահայտված նպատակային հարաբերությունը եթե արտահայտենք շաղկապի միջոցով, ապա, ինչպես վերևում էլ տեսանք, այս պարզ նախադասության փոխարեն կստանանք մի բարդ նախադասություն, որի մեջ նախկին սեռական հոլովով դրված կապի խնդիրը կվերածվի դիմավոր բայի՝ Զրուանն զի մի՝ օրիցլ զոխտն՝ առ ցկրհմնն: Այլ խոսքով՝ կապը շաղկապով փոխարինելիս պարզ նախադասության փոխարեն ստացվում է բարդ նախադասություն:

Կապերի և շաղկապների տարբերության բնորոշ կողմերից մեկն էլ այն է, որ առաջինները շատ սերտ են կապված կապի խնդրի հետ և պայմանավորում են նրա թեքման ձևը՝ հոլովը: Կապի խնդրի հոլովը կախված է կապից, դրվում է նրա պահանջով (իսկ այդ երկուսը միասին դրվում են ստորոգյալի պահանջով), այնինչ շաղկապներն այսպիսի սերտ առնչություն չունեն կապվող բառերի ձևաբանական կազմի հետ, նրանք հիմնականում անտարբեր են կապվող միավորների ձևի նկատմամբ: Բայց այստեղ կա մի հանգամանք, որ պետք է հաշվի առնել: Որոշ շաղկապներ առնչակցվում են բայի խոնարհման ձևի հետ: Այսպես, գրաբարի զի, որպես զի (նպատակի իմաստով), շատ անգամ նաև երբ, քի շաղկապներից հետո սովորաբար գործածվում է ստորադասական եղանակով (նաև սահմանական եղանակի ապառնիով) դրված բայը: Այս երևույթը դեռևս Ավետիքյանն է նկատել², նման երևույթի պատճառն աչն է, որ շաղկապներով արտահայտվող որոշ հարաբերություններ կապ ունեն որոշ կոնկրետ ժամանակի, ապագա գործողության, եղելության կամ պայմանի հետ:

Ա. Այտընյանը նշում է բայի ստորադասական եղանակի կիրառության դեպքերից մի քանիսի սերտ կապը որոշ շաղկապների և շաղկապական բառակապակցությունների հետ՝ ոչ երբ, իրի երբ, իրբու քի, մարք է զի, ի պէս է քի, երբ, քի և այլն³:

Բայի եղանակի ու ժամանակի կապը որոշ շաղկապների հետ ամենից ցայտուն երևում է այն դեպքերում, երբ բայը ապառնի ժամանակով է դրվում, նույնիսկ եթե գործողությունը վերաբերում է անցյալին կամ ներկային, ըստ որում հաճախ միևնույն ժամանակին վերաբերող բայերից մեկը փոխում է իր ժամանակը նախադասության որևէ շաղկապի պատճառով. օրինակ՝ «Զի բաղում այն են՝ զոր ոչ գիտեմ, Բա՛ն քի գիտիցեմ» (Եզնիկ վասն Վարդանայ և հայոց պատերազմին, Երևան, 1957, էջ 199), «Սակայն կայր զօրացեալ ուժով շնորհօք հզօրին, որպէս զի բնաւ չիցի վիրաւորեալ» (Ղազարայ Փարպեցոյ Պատմութիւն հայոց, Տիգրիս, 1904, էջ 100):

¹ Տե՛ս Овсяннико - Куликовскнй, Синтаксис русского языка, էջ 269:

² Տե՛ս Գ. Ավետիքյան, Քերականութիւն հայկական, Վենետիկ, 1816, էջ 135:

³ Տե՛ս Վ. Չալոբյան, Քերականութիւն հայկազնյան լեզվի, Վիեննա, 1885, էջ 374—375:

«բայց ինքն երկ իցի և երկ շիցի, զայն ոչ գիտեալ» (Եղեկ, Լժ 11) փոխանակ՝ Լթի և Լթե չէ։ Արդի հայերենում ես նպատակի իմաստով ուր. ուրպեսզի շաղկապներից հետո բայը զրկում է բղձական եղանակով և չի կարող զրկել ուրիշ եղանակով։

Որոշ շաղկապների և բայի եղանակի ու ժամանակի միջև եղած այս կապը հիշեցնում է նախդիրների ու նախադրությունների ստեղծությունը կապվող բառի հոլովի հետև Սակայն այս-տեղ ես կապերի ու շաղկապների էական տարբերությունը մոռում է, որովհետև շաղկապի ստեղծությունը բայի թևածան հետ լուկ մասնակի երևույթ է, իսկ կապերի սերտ առնչությունը կապի խնդրի հոլովի հետ մշտական ու պարտադիր է։

Բացի այս, կապերն առանձին թևածան նախադասության անդամ չեն դառնում, սակայն կապի խնդրի հետ մի սերտ միություն կազմելով մտնում են նախադասության անդամի կազմի մեջ, այնինչ շաղկապները ոչ մի զեպում չեն կարող այս կերպ միանալ նախադասության որևէ անդամի հետ։

Նախադասության անդամներ կապակցելու համար շաղկապների ֆունկցիոնալ ու իմաստային հնարավորություններն այնքան լայն չեն, որովհետև նրանք կապակցում են նախադասության միայն համադիր անդամներ, վերջիններիս միջև հարաբերությունների որոշ սահմանափակ ոլորտ բնորոշելով, արտահայտում են մոտավորապես՝ միավորության, տրոհության, ներհակության հարաբերությունները։ Նախադասության անդամների միջև այլ բնույթի, ստանձնապես լրացման ու լրացյալի կամ կախման հարաբերություններն արտահայտվում են նախդիրների ու նախադրությունների կամ այլ միջոցներով, բայց ոչ շաղկապներով։

Շաղկապները կապակցում են ոչ միայն նախադասության անդամներ, այլև նախադասություններ, կամ՝ բարդ նախադասության բաղադրիչ մասեր, ի տարբերություն կապերի, որոնք շարահյուսական ալիպիսի ֆունկցիա չունեն։ Այս բնագավառում արդեն շաղկապների ֆունկցիոնալ հնարավորություններն անշուրջ լայն են ու բազմազան։ Նախադասությունների կամ բարդ նախադասության բաղադրիչ մասերի կապակցության մեջ է, որ զրահորդում է շաղկապների իմաստային ու ֆունկցիոնալ ամբողջ հարստությունը։ Բարդ նախադասության մասերի միջև շաղկապները կարող են իրագործել թե՛ համադասական և թե՛ ստորադասական (լրացման ու լրացյալի) կապակցություն, իսկ իմաստային տեսակետից դրանց միջև կարող են արտահայտվել ամենաբազմազան բնույթի հարաբերություններ։ Ճիշտ է, բարդ նախադասության մասերի կապակցությունն էլ սոսկ միայն շաղկապներով չի կատարվում, այստեղ դեր ունեն նաև որոշ ղեկավարներ ու մակրայնր՝ այսպես կոչված հարաբերական բառերը, սակայն զրահով շաղկապների զերը չի սահմանափակվում։ Հարաբերական բառերը նախադասությունների կապակցություն իրագործում են շաղկապական ֆունկցիա ձևեր բերելով, իրենց իմաստային կոնկրետությունը որոշ չափով կորցնելով ու վերացականություն ստանալով։

Բարդ նախադասության մասերի կապակցությունը շաղկապների բառային արժեքի զրահովման բնագավառն է, իսկ չէ, որ տարբեր լեզուների բերականությունների հենց այս բաժնում է, որ ավելի հանգամանորեն են քննվում շաղկապները։

Շաղկապը կարող է զրվել մի պարզ, անկախ նախադասության սկզբում, որը քերականական կապ չունի մի ուրիշ նախադասության հետ, վերջինս, օրինակ, հետևյալ հատվածը Եղեկից, «Լիթի և զարախիզէ՛ն ես որ կարիցի տանե՛ թէ և զայն ես ուրուք տեսեալ իցի, և թէ յառաջին ժամանակս արալղզ լիղլին զվիրաւորս և ողջացուցանիւն, արդ բնդէ՛ր ոչ լիղլիցեն և ողջացուցանիցեն. ո՛չ նոյն պատերազմունք են, և նոյնպէս վիրաւորք անկանին»։

Այլ յայնժամ, ասեն, զիցապունք էին» (Եղեկ, Լժ 70)։

Վերջին նախադասությունը, որ սկսվում է այլ շաղկապով, մի ինքնուրույն նախադասություն է, որ քերականորեն չի կապված կոնտեքստի ուրիշ նախադասությունների հետ։ Այլ շաղկապն այստեղ քերականական կամ շարահյուսական կապ չի ստեղծում ո՛չ նախադասության անդամների և ո՛չ էլ բարդ նախադասության մասերի միջև։ Սակայն այստեղ բացակայում է միայն քերականական անմիջական կապը։ Ինտոնացիայի և քերականական տեսակետից այս նախադասության ավարտուն լինելը չի նշանակում, թե այն տրամաբանորեն կապված չէ նախորդ նախադասության կամ պարբերության մեջ արտահայտված մտքի կամ մտքերի հետ։ Եղեկի նախադասությունն իր բովանդակությամբ հանդիսանում է մի առանձին միավոր, որ հակադրական հարաբերության մեջ է գտնվում նախորդ նախադասության կամ պարբերության մեջ արտահայտված մտքի հետ, հետևաբար տրամաբանական շղթայակցման մեջ է նրա հետ։ Հենց այս տրամաբանական կապն է, որ արտահայտված է այլ շաղկապի միջոցով։

Այս ձևով գրված շաղկապները տրամաբանական կապ են ստեղծում քերականորեն անկախ նախադասությունների, պարբերությունների կամ խոսքի տարրեր հատվածների միջև:

Շաղկապ կարող է գրվել նաև այնպիսի նախադասության սկզբում, որից առաջ չկա որևէ շարահյուսական միավոր, որի հետ շաղկապով սկսվող նախադասությունը կապվի քերականորեն կամ տրամաբանորեն: Այսպես են մասնավորապես քլ., եքլ շաղկապներով սկսվող այն նախադասությունները, որոնք հանդիսանում են վերնագրեր որևէ գրվածքի կամ այդ գրվածքի առանձին մասերի, հատվածների և այլն, օրինակ՝ «Եթե՞ դիարդ Անտոնիոս իւրովի դիմեալ ի վերայ զօրացն Հայոց առնու զՇամշատ» (Խոր., էջ 95). այսպես է նաև Նար-Գոսի հայտնի պատմվածքի վերնագիրը. «Թե ինչ եղավ հետո, երբ շաքարամանից երկու կտոր շաքար պակասեց»: Եման ղեպերում շաղկապի դերն այն է, որ նա իրենով սկսվող նախադասությունը կապակցում է մտքով կամ զորութեամբ հասկացվող մի բառի, բառակապակցության կամ նախադասության հետ: Նշված օրինակներում շաղկապից առաջ թեպետ գրված չէ, բայց մտքով հասկացվում է մի այդպիսի շարահյուսական միավոր՝ այն մասին, քե..., որտեղ պատմվում, խոսվում է այն մասին, քե..., և այլն:

Այսպիսով, շաղկապների կապակցական ֆունկցիան խոսքի շարահյուսական կառուցվածքի մեջ բովանդակյալն ու բազմապիսի է, դրանք կարող են իրար հետ քերականորեն կամ տրամաբանորեն կապակցել նախադասության համազոր անդամներ, նախադասություններ, խոսքի առանձին հատվածներ, պարբերություններ և այլն, ըստ որում կապվող եզրերից մեկը երբեմն կարող է առկա չլինել, այլ սոսկ մտքով հասկացվել:

Այս բոլորը՝ նախադասության համազոր անդամները, նախադասությունները կամ բարդ նախադասության քաղաղորչ մասերը, խոսքի առանձին հատվածները, պարբերությունները և այլն, շարահյուսության բնագավառին են վերաբերում, ուստի այդ բոլորը կարելի է կոչել շարահյուսական միավորներ ընդհանուր առմամբ:

Ինքնին հասկանալի է, որ շաղկապները շարահյուսական միավորների սոսկական կապակցություն չեն կատարում, այլ կապակցում են իրար նկատմամբ ունեցած զանազան իմաստային փոխհարաբերություններով՝ կապվող միավորների միջև արտահայտելով վերևում նշված վերաբերական (քերականական) իմաստներ:

Շաղկապների իմաստային ու ֆունկցիոնալ առանձնահատկություններից է բխում այն հանգամանքը, որ դրանք նախադասության անդամ չեն դառնում և խոսքի մեջ սոսկ սպասարկու՝ քերականական դեր ունեն:

Այսպիսով, շաղկապների էական առանձնահատկությունները, որոնցով նրանք կազմում են բառերի մի առանձին խումբ առանձնանալով ու տարբերակվելով այլ խոսքի մասերից, արտահայտվում է դրանց յուրահատուկ իմաստների՝ վերաբերական իմաստների կամ հարաբերությունների, ինչպես և սպասարկու դերի՝ շարահյուսական միավորներ կապակցելու մեջ. այս երկու կարևոր կողմերի հետ սերտորեն կապված են և դրանցից են բխում նաև դրանց ձևաբանական փոփոխությունների շնթարկվելու և նախադասության անդամ չդառնալու հատկանիշները:

Շաղկապների խոսքի մասային էական առանձնահատկությունների այս նկարագրությունը սոսկ ընդհանրական նշանակություն ունի, շաղկապի հետ կապված մյուս հարցերը մեծ մասամբ շոշափում են դրանց կոնկրետ կիրառության այլ և այլ դրսևորումները խոսքի մեջ:

Այս ընդհանուր բնութագրությունը հաշվի առնելով կարելի է համառոտ կերպով տալ շաղկապների սահմանումը հետևյալ ձևով. Շաղկապներն այն բառերն են, որոնք կապակցում են նախադասության համազոր անդամներ, նախադասություններ, խոսքի առանձին հատվածներ ու պարբերություններ՝ դրանց միջև արտահայտելով զանազան հարաբերություններ:

Բ

Նկարագրված առանձնահատկություններ ունեցող բառերը կազմելով մի խումբ, այնուամենայնիվ մի անանցանելի օսահմանով անջատված չեն այլ խոսքի մասերից: Լեզուն մշտապես շարժվող և փոփոխություններով զարգացող այնպիսի կենդանի երևույթ է, որ երբեք չի կարող ենթարկվել որևէ կայուն օխեմայի, այնպես որ, ամեն մի խոսքի մաս, այդ թվում և շաղկապները, բազմաթիվ թվերով կապված է ուրիշ խոսքի մասերի հետ: Շաղկապի ֆունկցիա կատարող բառերի ամբողջությունը կազմում է լեզվի շաղկապական համակարգը, որի մեջ կան զանազան շերտեր՝ ա) բառեր, որոնք բացառապես կամ գերազանցապես շաղկապի դեր են կատարում.

այսպես կոչված բուն շաղկապներ են, ինչպես՝ և, քէ, Լքէ, Բանգի, վասն զի, քէպտ, որովհետև և այլն. բ) բառեր, որոնք մեկ իմաստով ու կիրառությամբ շաղկապ են, իսկ մի այլ իմաստով ու կիրառությամբ ուրիշ խոսքի մաս, ինչպես՝ զի, այլ, Բայց, կամ, ուստի և այլն, գ) բառեր, որոնք ունեն ոչ շաղկապի, այլ որևէ ուրիշ խոսքի մասի արժեք, բայց միաժամանակ կատարում են շաղկապի դեր, ինչպես՝ որ, որ ինչ, ուր, մինչև, իրեւ, յորժամ և այլն

Շաղկապի ֆունկցիա ունեցող այս երեք խմբի բառերի մեջ առանձին տեղ են բռնում վերջինները, որոնք թեպետ պատկանում են այս կամ այն խոսքի մասի, բայց դրա հետ միաժամանակ շաղկապի դեր են կատարում, այսպես ասած՝ շաղկապական բառեր են։ Սրանց մեջ մտնում են նախ և առաջ բոլոր հարաբերական բառերը։ Դրանք այնպիսի դերանուններ ու մակբայներ են, որոնք իրենց վրա են վերցնում բարդ նախադասության բաղադրիչ մասերի ղեկավար, շաղկապման պաշտոնը։ Մեծ մասամբ դրանք հարցական բառեր են, որոնք առանց հարցի են գործածվում։ Դրանց մեջ ամենից ավելի մեծ դեր ունի որ հարաբերական գերանունը, որը ոչ միայն իր ուղիղ և թեթևակեցական կատարում է կապակցական պաշտոն, այլև զանազան բառերի հետ միանալով կազմում է բազմաթիվ ուրիշ հարաբերական բառեր, ինչպես՝ որ ինչ, որ ո՛վ, որպիսի, որչափ, յորժամ, յորմէ հետև, յորում ժամու, ցուր վայր, զուր օրինակ և այլն։ Իբրև հարաբերական բառեր գործածվում են նաև՝ զինչ, ուր, ուր ուրեմ, ուստի, իրեւ, մինչ, մինչև, մինչ չև, մինչ դեռ, այն ինչ, չև ևս և այլն, որոնց մեծ մասը տեղի և ժամանակի իմաստ ունի։

Հարաբերական բառերի կիրառությունն ունի մի շարք առանձնահատկություններ, որոնցից մի քանիսի պարզաբանումը կարևոր նշանակություն ունի շաղկապների և շաղկապի դեր կատարող այլ բառերի ֆունկցիոնալ տարբերակման համար։

Հարաբերական բառերը սովորաբար չկազմում են երկրորդական նախադասության մեջ՝ այն կապելով գլխավորի հետ։ Ի տարբերություն բուն շաղկապների, հարաբերական բառերը երկրորդական նախադասության այս կամ այն անդամի պաշտոն են կատարում, կարող են լինել ենթակա, խնդիր, պարագա և այլն։ Օրինակներ՝

Հարաբերական բառը ենթակա. «Եւ դնաց ցովնաթան րնգ արքային մինչև ի կողմանս գետուն, որ անուանալ կոչի Ագատ» (Ա. Մակ., ԺԷ, 7)։

Հարաբերական բառը խնդիր. «Եւ պատմէին առաջի արքային, որ զինչ մի անգամ գործնաց 3ովնաթան» (Ա. Մակ., ԺԷ, 5), «Եւ այսպէս շորեքին բնութիւնքն, ուստի աշխարհս կազմեալ և կայ, առանձինն ապականիչք են միմեանց» (Եղեիկ, Լջ 9)։

Հարաբերական բառը հատկացուցիչ. «... հանապազ բղխեն և ոչ պակասեն, որոց բրդիսմունքն զալոց կարօտութիւնս լնուն» (Եղեիկ, Լջ 7)։

Հարաբերական բառը պարագա. «Այս երկրորդ ամ է, յորմէ հետև այն գործեցաւ» (Մատթ., ԺԳ, 40), «... եւ շարժարեցաւ ամենայն ուրեք, ուր շարժարեցաւ հայր իմ» (Գ. Թագ., Բ, 26)։

Հարաբերական բառերն այս ձևով թեպետ նախադասության որևէ անդամի դեր են կատարում, սակայն դրանք նախադասության սոսկ ձևական անդամներ են, դրանց կոնկրետ նյութական բովանդակությունը չի հասկացվի, եթե չլինի բարդ նախադասության մյուս մասը։ Հարաբերական բառերի իմաստն անորոշ է, այն իր բովանդակությունն ընդունում է գլխավոր նախադասության մեջ եղած մի բառից (նախադասության անդամից), որին ակնարկում է, որին վերաբերում է հարաբերականը։ Հարաբերական բառերի կիրառության առանձնահատկությունն է այն, որ բարդ նախադասության մյուս մասում (գլխավոր նախադասության մեջ) դրանց համապատասխանում են զանազան բառեր, որոնք կոչվում են հարաբերյալ։ Այսպես, վերը բերված օրինակներից առաջինում, որ հարաբերականին (ենթակա) գլխավոր նախադասության մեջ համապատասխանում է զետոյն հարաբերյալը (տեղի պարագայի նշանակությամբ), երկրորդ օրինակում հարաբերյալը ղեկավար է, բայց հասկացվում է որ զինչ հարաբերականից և բայ-ստորոգյալից՝ պատմիւն... զայն։ Այսպես և մյուս օրինակներում հարաբերական բառերին զուգահեռաբար գրված են համապատասխան հարաբերյալներ, կամ, եթե չեն գրված, ապա հորոշվում, մտքով հասկացվում են շնորհիվ հարաբերականի և նախադասության ստորոգյալի։

¹ Հետաքրքիր է նշել, որ զեղչված հարաբերյալի գեղեքում ոչ միայն նախադասության ստորոգյալն է թեկադրում մտքով հասկացվող հարաբերյալի հոլովը, ինչպես՝ «Եւրանի, որ քաղցեալ և ծարաւի իցեն արդարութեան» (Մատթ., ԼԵ, Ծ), որից հասկաց-

ինչպես հարաբերականը, այնպես էլ հարաբերյալը նախադասության որևէ անդամի պաշտոն է կատարում, քստ որում այդ երկու բառերը կարող են հանգես գալ թե՛ միևնույն և թե՛ իրարից տարբեր պաշտոններով, ինչպես երևում է բերված օրինակներից:

Իբրև հարաբերյալ կարող է գործածվել ամեն մի խոսքի մաս՝ նախադասության տարբեր պաշտոններով, բացի ստորոգյալից, բայց հարստերյալի դերում ամենից շատ հանգես են գալիս մի շարք ցուցական դերանուններ ու մակբայներ և դրանցով կազմված բառակապակցություններ, ինչպես՝ այն, նոյն, նոյն օրինակ, այնպիսի, յայնժամ, ցայն վայր, մինչև ցայն վայր, ի նմին ժամու, անդ, անտի և այլն: Սրանց հետ գործածվելով հարաբերականները, որոնք կարող են հարաբերյալից առաջ կամ հետո դրվել, կազմում են բազմաթիվ զուգահեռ կամ զուգադրական կիրառություններ. ինչպես՝ այն... ու, ու... նա, ու... նոյն, ու ու... նա, ու... այլ... նոյնպես, ցուր վայր... ցայն վայր, ուստի... անտի, ու... անդ, յայնժամ... յուրժամ, յուրում ժամու... ի նմին ժամու, այնչափ... ուրչափ, զուր օրինակ... նոյն օրինակ և այլն:

Շաղկապի դեր կատարող բառերի մեջ կան այնպիսիք, որոնց խոսքի մասային արժեքը կամ պատկանելությունը կոնտեքստից, կապակցված նախադասությունից դուրս որոշելը դժվար կամ նույնիսկ անհնար է, որովհետև տարբեր կիրառությունների մեջ տարբեր խոսքի մասային արժեք կարող են ստանալ: Այդպիսի բառերը տեղաշարժ են կատարում սովորաբար մակբայի, նախադրության և շաղկապի միջև. նման բառեր են՝ իբրև, իբրու, իբր, ուրպես, քան, մինչև, մինչ և այլն, որոնք հաճախ մի դեպքում մակբայ են, մյուս դեպքում նախադրություն կամ շաղկապ: Դրանց խոսքի մասային արժեքը որոշելու համար պետք է հաշվի առնել կոնկրետ կիրառությունը, նախադասության մեջ եղած մյուս բառերի հետ ունեցած դրանց առնչությունը:

Վերջենք օրինակ՝ իբրև, իբրու, իբր բառերը, որոնք լինելով նույն բառի տարբեր ձևափոխությունները մեծ մասամբ նույն կիրառությունն ու իմաստներն ունեն: Դրանցից ամենից շատ գործածվում է իբրև-ը. այն արտահայտում է մի շարք իմաստներ, բայց հաճախ նույն իմաստով նա խոսքի մասային տարբեր արժեքներ կարող է ստանալ՝ նայած թե ինչպիսի կիրառություն ունի: Իբրև-ը արտահայտելով ժամանակի՝ գործողության հատկանիշի զաղասիար, մակբայական արժեք ունի, ինչպես օրինակ. «Իբրև ետև թագաւորն Հայոց՝ ցնծացեալ ել ընդ առաջ նորա» (Ազաթանգեղայ Պատմութիւն հայոց, Տիպիս, 1909, էջ 21), բայց իբրև-ն այստեղ միաժամանակ շաղկապի դեր ունի, որովհետև նրա միջոցով բարդ նախադասության մասերի միջև բերականական կապ է ստեղծվում: Դրվելով երկրորդական նախադասության սկզբում իբրև-ն այն կապում է գլխավորի հետ, հետևապես նա այստեղ հարաբերական բառ է: Ցույց տալով նմանություն բաղդատությամբ և գրվելով զ նախդիրն ունեցող հայցական հոլովով բառի հետ իբրև-ն ստանում է նախադրական-մակբայական արժեք, ինչպես՝ «Իբրև զծիծառն այնպէս ճշեցից և իբրև զաղանիս այնպէս մնչեցից» (Նս., ԼԸ, 14): Այսպիսի կիրառություններում համեմատության մեջ գրված բառի հոլովը կախում ունի իբրև-ից, վերջինս վերցնում է զ նախդիրն ունեցող հայցական հոլովով խնդիր՝ կոտարելով նախադրության դեր (բերված օրինակում իբրև-ի մեջ առկա է նաև մակբայական արժեքը, բանի որ արտահայտում է գործողության ձևի զաղասիար):

Բայց բաղդատությամբ նմանություն ցույց տալով իբրև-ը ոչ միայն հայցականի, այլև ուրիշ հոլովների հետ էլ կարող է գրվել: Այս դեպքում արդեն համեմատության մեջ գրված բառի հոլովը կախում ունի ոչ թե իբրև բառից, այլ նախադասության բայ-ստորոգյալից: Այս կերպ իբրև-ի միջոցով համեմատության մեջ բերվող բառերը բոլոր հոլովներով էլ կարող են գրվել, և այդ դեպքում իբրև-ը համեմատող բառերի միջև սոսկ շաղկապական դեր է կատարում:

Վրում է՝ երանի այնոցիկ, այլև երբեմն հարաբերականն ինքն է վերցնում հարաբերյալի հոլովը, որով իր մեջ ամփոփում է նաև զեղչված հարաբերյալի իմաստը, ինչպես հետևյալ օրինակում. «Սրպէս ազոխ՝ առամանց վնասակար է՝ և ծուխ աչաց, նոյնպէս և անօրէնութիւն՝ որոց վարին նովաւ» (Առակք, Ժ, 26): Այստեղ ոչ հարաբերականը գրված է զեղչված հարաբերյալի հոլովով, եթե վերջինս զեղչված չլիներ, ապա կապակցությունը պետք է ունենար հետևյալ կերպարանք՝ նոյնպէս և անօրէնութիւն այնոցիկ, ուր վարին նովաւ:

Ձեզված հարաբերյալի դեպքում հարաբերականի հոլովի և դանազան կիրառությունների մասին տե՛ս Չ ա լ ը յ ա ն, Քերականություն հայկադնյան լեզվի, էջ 342—347 և Ս ա լ ը ա ս յ ա ն, Գրարարի համաձայնություններ, էջ 136—138:

րում առանց անհույսության ունենալու գրանց հոլովի հետ և հետևաբար կորցնելով նախադրության արժեքը: Հետևյալ օրինակները ցույց են տալիս, որ համեմատվող բառերը հոլովով համաձայն են իրար հետ և կարող են գրվել բոլոր հոլովներով, որը կախում ունի ոչ թե իրականացման, այլ կապված է նախադասության բայ-ստորոգյալի հետ. «Իշխանք նորա իբրև առիժունք գոչեսցեն» (Սոփոնիա, Գ, 3). «Իբրև զի զեղեցիկ են ի վերայ լերանց ուրուք աւետարանչի Համբարումն իսղազույթեան, իբրև աւետարանչի բարութեանց» (Նս., ՄԲ, 7), «և ոչ ասկ զաւակաց՝ իբրև բազմաց, այլ իբրև զմիոյ» (Գաղ., Գ, 16), «Ժողովեաց զգօրս իւր անթիւ և անհամար իբրև զաւագ առ ափն ծովու» (Փափստոսի Բիւզանդացոյ Պատմութիւն Հայոց, Թիֆլիս. 1913, էջ 212), «և ի ձայնէ անտի նորա եղև իբրև ի փոքրիկ աղբերէ զետ մեծ յստակ» (Նսթ., ԺԱ, 10), «և ոչ ժուժկալութեամբ իբրև երկաթի եղնգամբք քերեմք ի մէջ զթարախն անօրէնութեան» (Յովհաննու Մանգակունու ճառք, Վենետիկ, 1836, էջ 10), «ի խրատու համբերութեամբ կայր, իբրև յորդիս մատուցեալ է ի ձեզ աստուած» (Եբր., ԺԲ, 7):

Այն հանգամանքը, որ բերված օրինակներում իբրև-ը կարող է գրվել ամեն մի հոլովով գրված բառի հետ, նույնիսկ ուղղակիների, ցույց է տալիս, որ իբրև-ն այսպիսի գեղարվեստական որոշում բառի հոլովը, չի վերջնում կապի խնդիր, հետևաբար կապական (նախադրական) հատկանիշ չունի: Նրա հետ կապված բառը նախադասության մեջ լինելով նույն վիճակի կամ պատկերի մեջ, ինչ որ համեմատելի բառը: հոլովով նրա հետ է համաձայն: Այս նշանակում է, որ իբրև-ի գերը նման գեղարվեստական զուտ շաղկապական է:

Բայց երբ իբրև-ով կապվող բառը լինելով նույն պաշտոնում կամ վիճակում, ինչ որ համեմատելի բառը, այնուամենայնիվ վերջինիս հետ հոլովով չի համաձայնում, այդ դեպքում արդեն պարզ է, որ նրա հոլովը որոշվում է իբրև-ով, նշանակում է, որ արդեն իբրև-ն րմբռնվում է որպես նախադրություն, որ պետք է վերջինի հայցականով կապի խնդիր, օրինակ. «և եղիցեն վիմարգելի իբրև գործարգելս» (Նս., ԼԱ, 9), այս նախադասության մեջ համեմատվող բառերը, որ պետք է արտահայտվեն միևնույն հոլովով, ինչպես վերևում բերված օրինակների մեջ, գրված են տարբեր հոլովներով: Դրա պատճառն այն է, որ այստեղ իբրև-ն րմբռնվել է որպես նախադրություն, հետևաբար և վերջինի է հայցական հոլովով գրված կապի խնդիր, անկախ համեմատելի բառի հոլովից:

Թևակտ կիրառության այսպիսի տարբերություններից իբրև բառի իմաստը որևէ չափով չի փոխվում, գրված բոլոր դեպքերում էլ նա արտահայտում է մեկնույն հարաբերությունը: աշխատանքային վերևում թվարկված բառերի կոնկրետ կիրառության մեջ ունեցած նման տարբերություններն անպայման պետք է հաշվի առնել, այնպես հնարավոր չէ որոշել դրանց կոնկրետ խոսքի մասալիս արժեքը: Մակբալի, նախադրության և շաղկապի միջև տեղաշարժ կատարող մի քանի բառերի կոնկրետ արժեքը ձևական թվացող այսպիսի շարահյուսական տարբերությունների մեջ է միայն երևան գալիս:

Այն, ինչ որ ասվեց իբրև բառի մասին, վերաբերում է նաև ռբակս-ին, վերջինս մակբայ է և միաժամանակ շաղկապի գեր է կատարում հետևյալ տիպի կիրառությունների մեջ. «որպես պատուէր ետու եկեղեցոյն զաղատացոց նոյնպէս և դուք առնիջիք ըստ իւրաքանչիւր միաշարաթոյն» (Ա. Կորնթ., ԺԳ, 1): Իսկ երբ նմանություն ցույց տալու համար համեմատության մեջ գրվող գույգ բառերից մեկը ռբակս-ի մոտ գրվում է հայցական հոլովով, անկախ համեմատելի բառի հոլովից, այդ դեպքում ռբակս-ը ձևով է բերում նախադրության արժեք՝ ունենալով հայցական հոլովով գրված կապի խնդիր, օրինակ՝ «անդասին որպէս զարմաննիս ծաղկեցին» (Սաղմ., ՂԱ, 13), «և տարուք ինձ ասորբք և ծաղկեցէր որպէս զվարդենի» (Սիրաք, ԼԹ, 17):

Սակայն իբրև-ի նման ռբակս-ն էլ կարող է գրվել ամեն հոլովով գրված բառի վրա, որը կախում չունի ռբակս-ից. օրինակ՝ «եղէ ևս որպէս մարդ առանց օգնականի» (Սաղմ. ԶԷ, 5), «Մարդոյ, որպէս խոռոյ ևս աւուրք իւր» (Սաղմ., ԺԲ, 15), «Ընդ առաջ քո ելանէ որպէս անառակ որդւոյն» (Մանգ., էջ 17): «Հաստատեցեր զոտս իմ որպէս զեղջերոյի» (Սաղմ., ԺԷ, 34): «Են որ բանիւր իւրեանց խոցեն որպէս սրով» (Առակք, ԺԲ, 18):

Այս օրինակում համեմատվող եզրերից մեկը (երկրորդը) բացակայում է, բայց հանկարգում է հետքիմ նրա լրացման (հատկացուցչի)՝ զեղջերոյի, որը վերջերև է գեղջված լրացյալի (հատկացյալի) զ նախդիրը: Եթե այն վերականգնենք, կլինի՝ որպէս զոտն եղջերոյի: Զեղջված բառի նախդիր այսպիսի փոխանցումը նրա լրացման վրա սովորական բան է գրաբարում:

Նման կիրառությունների մեջ, ճիշտ այնպես, ինչպես իրերի-ի համար, տեսանք, որպես-ր առնչություն շունենալով կապվող բառերի հոլովի հետ գրանց միջև զուտ շաղկապական դեր է կատարում:

Քանք նախադրություն է, Երբ նրա հետ դրվում է հայցական հոլովով բառ որպես Բան կապի խնդիր, օրինակ՝ «Յայտ է, թէ Լը ոմն ի վեր քան զնա» (Նզնիկ, էջ 82), «Ո՞չ ապաքէն դուր առաւել Լը քան զնրոս» (Մատթ., 2, 26), «Չեմ անմտագոյն քան զձեզ» (Յովբ., ԺԳ, 2), «Զի չիք ինչ արարած իանավոր արուարս քան զայս Երիս հոկոս» (Նզնիկ, էջ 68):

Բայց հաճախ Լան-ը կապելով նույնահոլով բառեր, բոլոր հոլովների մոտ էլ կարող է դրվել, այդ դեպքում համեմատվող բառերի հոլովը չի պարմանավորվում Լան-ով, այլ դրվում է նախադասության բայ-ստորոգյալի համաձայն, նույն ձևով, ինչպես որ իրեր, որպես բառերով կապվելու դեպքում, օրինակ. «Հնազանդել պարտ է աստուծոյ քան մարդկան» (Գործք, Ե, 29), «Սիրեցին մարդիկ զխաւար առաւել քան զլոյս» (Յովհ., Գ, 19), «Լաւ է կոյր աշօք քան կոյր մօտք» (Նզնիկ, 14), «Փափարէ ի մահ քան ի կեանս» (Նզնիկ, էջ 170): Նույնիսկ հայցական հոլովի հետ դրված օրինակում Լան-ը ոչ թե կապի, այլ շաղկապի հատկանիշ ունի, որովհետև «սիրեցին զմարդիկ զխաւար առաւել քան զլոյս» նախադասության մեջ զլոյս բառի նույնահոլով լինելը համեմատելի զխաւար բառի հետ մատնանշում է, որ նա հայցական հոլովով է գրված ոչ թե որպես Լան կապի խնդիր, այլ որովհետև զխաւար բառի հետ նույն պաշտոնն է կատարում, Երկուսն էլ ուղիղ խնդիրներ են դրված սիրեցիմ ներգործական բայի պահանջով, ինչպես և թե Լան-ը փոխարինելիք և շաղկապով և գրեինք՝ սիրեցիմ զխաւար և զլոյս:

Մինչև բառը կապական հատկանիշ ունի, Երբ վերցնում է խնդիր մեծ մասամբ նախորդի հայցականով (ի, ց, առ նախդիրներին զուգահեռ) տեղի և ժամանակի նշանակությամբ, օրինակ. «Պէտքս աղոթս մասուցանել մինչև ցերեկոյն» (Բուզ., էջ 296), «Ե զգորսն փախստական արարեալ հալածական սանկին մինչև ի սահմանս Յունաց» (Ագ., էջ 24):

Ժամանակի իմաստով դրվելով բայի մոտ այս բառը բարդ նախադասության բաղադրիչ մասերի կապակցությունն է ծառայում և վերածվում շաղկապական մակբայի. «Եւ Լու հրաման քերել զկողս նորա Երկաթի քերչօք, մինչև ոռոգան վայրքն ամենայն յարեւն նորա» (Ագ., էջ 65): Հաճախ կորցնում է տեղի և ժամանակի իմաստը, նշանակության կողմից առավել վերացականություն է ստանում և վերածվում է զուտ շաղկապի, օրինակ՝ «ոչ րստ արքունի արժանատությունն առնուին, այլ հինարար յափշտակելով մինչև ինքեանք իսկ զարմանային» (Նզնիկ, էջ 23):

Որոշ բառերի խոսքի մասային այսպիսի տեղաշարժերը կամ փոխանցումները՝ մակբայ-նախադրություն—շաղկապ, արտացոլում են լեզվի կենդանի ու շարժուն բնույթը: Բառերը երբեք բարացած չեն մնում, այլ գտնվում են մշտական փոփոխման ու զարգացման մեջ բոլոր կողմերից՝ իմաստային, ֆունկցիոնալ, հնչյունական և այլն: Բառը գտնվելով այսպիսի փոփոխման ենթակա վիճակում՝ աստիճանաբար կարող է հեռանալ իր նախկին ֆունկցիայից, իմաստից կամ հնչյունական ձևից, որով լեզվի մեջ կարող են առաջանալ միևնույն բառի ֆունկցիոնալ, իմաստային կամ հնչյունական տարբերակներ, իսկ երբեմն էլ բառի այդ տարբերակներից մեկը, սովորաբար նախկինը, կարող է մահանալ և մնալ միայն նորը: Այս երևույթը նկատվում է գրաբարի շատ շաղկապների մեջ:

Շաղկապի դեր կատարող բառերի մեջ առանձին տեղ են բռնում մի շարք բառակապակցություններ, որոնք իրենցից ներկայացնում են նախադրության և խնդրի շարահյուսական անբաժանելի ու կայուն կապակցություններ՝ վասն այսուրիկ, վասն այդուրիկ, վասն այնուրիկ, այսուրիկ աղագաւ, այդուրիկ աղագաւ, այնուրիկ աղագաւ, այնու աղագաւ, յաղագս այսուրիկ, յաղագս այդուրիկ, յաղագս այնուրիկ, յաղագս ոռոյ, յայս սակս, յայն սակս, սակս այսուրիկ, սակս այնուրիկ, սմին իրի, դմին իրի, նմին իրի և այլն:

Այս բառակապակցությունների մեջ, սակայն, նախադրությունն ու իր խնդիրն առանձնապես չեն զգացվում, դրանք հանդես են գալիս շաղկապի ֆունկցիայով, որպես մի անբաժանելի բառակապակցություն մեկ բառի նշանակությամբ:

Շաղկապական բառակապակցությունների նման ձևեր կան նաև աշխարհաբարում, ինչպես՝ նրա համար, նրա համար որ, սրա համար, դրա համար, այն պատճառով, այն պատճառով որ, այս պատճառով, այդ պատճառով և այլն:

Շաղկապի ֆունկցիա կատարող այն բառերը, որոնք զանազան խոսքի մասերի մեջ են մտնում, իրենց շաղկապական դերը կատարում են իմաստային փոփոխություն չկրելով: Հարա-

բերական բառերը շաղկապական և դերանվանական կամ մակբայական ֆունկցիան միաժամանակ են կատարում միևնույն կիրառությամբ, իսկ մի քանի բառեր՝ իբրև, մինչև, քան, որպես և այլն առանց իմաստը փոխելու կարող են լինել մի դեպքում շաղկապ, մի այլ դեպքում մակբայ կամ նախադրություն, տարբերվելով սոսկ կիրառության շարահյուսական ձևերով։ Բոլոր այդ բառերը շաղկապական համակարգի մեջ մի առանձին շերտ են կազմում։

Շաղկապի դեր կատարող բառերի երկրորդ, ավելի կարևոր շերտը կազմում են այն բառերը, որոնք մեկ իմաստով ու կիրառությամբ շաղկապ են, իսկ մի այլ իմաստով ու կիրառությամբ՝ ուրիշ խոսքի մաս։ Սրանց էական առանձնահատկությունը, ի տարբերություն վերևում բնարկված բառերի, այն է, որ շաղկապի դերով կիրառվելիս ունեն մի առանձին իմաստ ու կիրառական առանձնահատկություններ, իսկ այլ խոսքի մասային արժեքով կիրառվելիս դրանից բոլորովին տարբեր իմաստ ու կիրառություն, այնպես որ, շաղկապական և ոչ շաղկապական դերով հանդես եկող այս բառերը, թվում է թե, սոսկ պատահական հնչյունական նմանություն ունեն։ Այդպիսի բառեր են՝ քի (հարցական դերանուն), այլ (դերանուն և մակբայ), իսկ (գոյական և ածական), կամ (գոյական), բայց (նախադրություն, որ գործածվում է ի նախդրի հետ բացառական խնդրով՝ բայց ի), ապա (սծական և մակբայ), ևս (սաստկական մակբայ) և այլն։

Այս բառերը մտնում են գրաբարի (մեծ մասամբ նաև արդի հայերենի) ամենահիմնական ու տարածված շաղկապների մեջ, բայց միաժամանակ դրանք նաև ուրիշ (փակագծերում նշված) խոսքի մասերի մեջ են մտնում, այնպես որ, խոսքից, կապակցված նախադասություններից դուրս հնարավոր չէ ասել, թե այլ-որ ինչ խոսքի մաս է, կոնստրուկցիայում նա կարող է լինել մակբայ, դերանուն կամ շաղկապ, իհարկե, տարբեր իմաստներով։

Շաղկապի դեր կատարող բառերի մյուս՝ երրորդ խմբի մեջ մտնում են այն բառերը, որոնք լեզվի մեջ միայն, կամ գերադանցապես շաղկապի դեր են կատարում։ Սրանց մեջ ավելի շատ են բարդ բառերը, որոնց բաղադրիչներից մեկը սովորաբար մի այլ խոսքի մաս է լինում, դրանք են՝ և, քի, երբ, քիչ, քիչ, սակայն, այլև, նաև, վասն զի, քանզի, որպես զի, որովհետև, փոխանակ զի, մինչ զի, քան քի և այլն։ Այս բառերը գրաբարում կայունացել են իրենց շաղկապական դերի մեջ և սովորաբար այլ խոսքի մասային արժեքով հանդես չեն գալիս։

Ընդհանուր հայացք գցելով շաղկապի դեր կատարող բառերի նկարագրված այս երեք խմբերի վրա, տեսնում ենք, որ դրանք այլ խոսքի մասերի հետ ունեցած առնչության տեսակետից տարբեր գիծեր են գրավում գրաբարի շաղկապական համակարգում։ Առաջին խմբի բառերը՝ հարաբերական և այլ շաղկապական բառերը, շաղկապական և ոչ շաղկապական խոսքի մասային արժեքները համատեղում են, այսինքն՝ նույն կիրառությամբ և նույն իմաստով միաժամանակ կատարում են և՛ շաղկապի, և՛ մի այլ խոսքի մասի դեր։ Երկրորդ խմբի բառերը՝ շաղկապական և ոչ շաղկապական արժեքները չեն համատեղում, այլ մեկ իմաստով ու կիրառությամբ կատարում են շաղկապի դեր, իսկ նրանից բոլորովին տարբեր իմաստով ու կիրառությամբ մի ուրիշ խոսքի մասի դեր։ Երրորդ խմբի բառերը որպես կանոն, միայն շաղկապ են և չեն մտնում այլ խոսքի մասերի մեջ։

Պատճառն տեսականորեն նայելով տեսնում ենք, որ այս խմբերը հանդիսանում են գրաբարի շաղկապական համակարգի երեք տարբեր, բայց պատմականորեն հաջորդական շերտերը և արտացոլում են շաղկապների առաջացման ու զարգացման առանձին փուլերը։

Շատ խոսքի մասեր առաջանում են մեկը մյուսից, ժամանակի ընթացքում կրելով իմաստային, ֆունկցիոնալ ու հնչյունական փոփոխություններ։ Լեզվաբանությունն ապացուցել է, որ սովորական բառերն առաջացել են նյութական իմաստ ունեցող բառերից, ըստ որում շաղկապներն իրենց հերթին առաջացել են դերանուններից, մակբայներից, ինչպես և նախդիրներից ու նախադրություններից։ Շատ լեզուներում ընդհանրապես բուն և ամենակարևոր շաղկապները մեծ մասամբ ունեն դերանվանական ծագում, այդպես է նաև հայերենում։ Այսպես, էական բայերի հետ գործածվող մի շարք դերանուններ գրաբարում կատարում են մեկնական շաղկապի դեր՝ այս է, այն է, որ է, այս իմեմ է և այլն։ Այս կերպ՝ այս և իմեմ դերանունների ձուլումով կազմվել է այսինեմ շաղկապը, որն արդեն իսկ գրաբարում կայունացել է շաղկապական ֆունկցիայի մեջ միազանցելով իր դերանվանական նշանակությունը։ Որովհետև շաղկապը ևս առա-

¹ СЕ"и Богородицкий, Очерки по языкознанию и русскому языку, М., 1939, էջ 204։

ջանում է ու հարաբերական գերանվան գործիական հոլովից, զի, ուրեմն, նա շաղկապները նմանապես ունեն գերանվանական արմատները: Բայց այս տեսակետից լավագույն օրինակը, որ ցույց է տալիս շաղկապի առաջացման աստիճանական պատմական ընթացքը, գրաբարի ու հարաբերական գերանվան շաղկապի վերածվելն է աշխարհաբարում: Այս բառը գրաբարում ունի հարաբերական գերանվան կիրառություն և կապակցական ֆունկցիա ունի այնքանով, որքանով որ հարաբերական բառ է: Նրա ոչ գերանվանական, այլ զուտ շաղկապական կիրառությունը զի կամ քի շաղկապների իմաստով չափազանց հաղվաղեպ երևույթ է մեծարության հայերենում և առաջանում է զի շաղկապի հետ շփոթվելու հետևանքով: Հետագայում, հատկապես միջին հայերենում, ու-ի զուտ շաղկապական կիրառությունն ավելի հաճախակի է և աստիճանաբար դառնում է սովորական, այնպես որ աշխարհաբարում արդեն վերջնականապես դուրս է մղել զի շաղկապն ու փոխարինում է սրան, պահպանելով նաև հարաբերական գերանվան իր կիրառությունը:

Շաղկապները ծագումնաբանական բացահայտ կես ունեն նաև ուրիշ խոսքի մասերի հետ, մակբայների՝ ուստի, բայերի՝ քեպլետ, քող քե, գոյականների՝ կում, նախադրությունների՝ վառն զի, քանզի, քան քե և այլն:

Եթե շաղկապներն առաջանում են զանազան խոսքի մասերից, ապա, բնականաբար, դա միանգամից տեղի չի ունենում, այլ աստիճանաբար: Զանազան, մեծ մասամբ նյութական իմաստ ունեցող, բառեր ժամանակի ընթացքում սկսում են կիրառվել նաև կապակցական ֆունկցիայով: Սկզբում բառի շաղկապական և ոչ շաղկապական արժեքները համատեղ են հանդես գալիս, բառը լինելով, ասենք, գերանուն, միաժամանակ շաղկապի դեր է կատարում, ինչպես տեսանք վերևում հարաբերական բառերի նկարագրության մեջ: Շաղկապի դեր կատարող բառերի վերևում նկարագրված առաջին խումբը՝ հարաբերական և այլ շաղկապական բառերը պտնվում են հենց այս վիճակում, դրանք այլ խոսքի մասերից շաղկապին անցնելու առաջին խումբն են: Այս շրջանում բառի շաղկապական և ոչ շաղկապական արժեքի միջև իմաստային ու ֆունկցիոնալ տարբերակում գեղես չկա: Հետագայում միայն նման կիրառության երկար ժամանակաշրջան անցնելուց հետո՝ բառի շաղկապական արժեքը տարբերակվում է անջատվում նրա այլ խոսքի մասային արժեքից և հանդես գալիս խոսքի մասային առանձին և ինքնուրույն նշանակությամբ: Բառերի այս վիճակը այլ խոսքի մասերից շաղկապներին անցնելու երկրորդ շրջանն է: Այսպիսի վիճակում գտնվող բառը մի դեպքում շաղկապ է, իսկ մի այլ դեպքում՝ գերանուն, ածական, մակբայ և այլն, ըստ որում նույն բառի շաղկապական և ոչ շաղկապական արժեքներն իրար հետ իմաստի ու ֆունկցիայի տեսակետից ոչ մի մոտիկություն չունեն և այնքան են հեռացած իրարից, որ, ինչպես նշվեց, թվում են սոսկ պատահական հնչյունական նմանություն ունեցող բառեր: Դրանց կապը միայն ծագումնաբանական է, որ հաստատվում է ստուգաբանության միջոցով: Այս վիճակում է գտնվում շաղկապի դեր կատարող բառերի վերևում բերված երկրորդ խումբը: Այս խմբի բառերը շաղկապական ֆունկցիայի մեջ կայունացել են և մտնում են գրաբարի ամենակարևոր ու տարածված շաղկապների մեջ:

Այլ խոսքի մասերից շաղկապների մեջ եկող բառերի հետագա զարգացումը կարող է ասցնել այն բանին, որ բառի նախկին՝ ոչ շաղկապական արժեքը աստիճանաբար կորչել է լեզվից, կիրառության հաճախակիությունը թուլանալու հետևանքով և մնա տվյալ բառի միայն նոր՝ շաղկապական արժեքը: Այսպիսի աստիճանի է հասել շաղկապի դեր կատարող բառերի երրորդ խումբը, որի մեջ մանող բառերի մի մասի՝ և, քե, ևքե, ավելի հին՝ ոչ շաղկապական արժեքները նույնիսկ հայտնի էլ չեն մեզ, սակայն շաղկապների ճնշող մեծամասնության այլ խոսքի մասերից առաջանալու ու զարգանալու ընդհանուր տենդենցի հիման վրա կարելի է ենթադրել, թե այս երեք բառերն էլ մի ժամանակ ունեցած պետք է լինեն ոչ շաղկապական կիրառություններ: Այս առումով տեղին է նկատել, որ եթե այլ, կամ, իսկ, բայց, ապա, ուստի, ուրեմն բառերի շաղկապական իմաստները գրաբարում հետագույն էին դրանց ոչ շաղկապական իմաստներից, իսկ վերջիններս չէին վերացել լեզվից, այլ նույնպես պահպանվել էին, ապա արդի հայերենում այս բառերից մի բանիսի ոչ շաղկապական արժեքն արդեն կորել է լեզվից: Այսպես՝ կամ, բայց, ուստի, ուրեմն բառերի՝ գրաբարում եղած ոչ շաղկապական արժեքներն

¹ Տե՛ս Հ. Աճառյան, Հայերեն արմատական բառաբան, նույն բառերի տակ:

² Ա. Այստընյան, Քննական քերականություն աշխարհաբար կամ արդի հայերեն լեզվի, Վիեննա, 1866, էջ 133:

արդի գրական հայերենում չեն պահպանվել և այդ բառերն այժմ միայն որպես շաղկապ են հանդես գալիս: Իրանցից բայց-ի կապական կիրառությունը նույնացել է բացի կապի հետ, որն առաջանում է գրաբարյան բայց-ի ձևից: Ուրեմն-ը այժմ որպես շաղկապ ավելի հաճախ է կիրառվում, քան գրաբարում, որտեղ նա մեծ մասամբ ապա շաղկապի հետ էր կիրառվում՝ ապա ուրեմն: Իսկ բառի ոչ շաղկապական արժեքը գրեթե կորել է՝ պահպանվելով միայն որոշ բարդ և ածանցյալ ձևերում (իսկապես, իսկակամ, իսկ և իսկ. կամ բառից բարդված ձևերի նման՝ կամալոր, կամակատար և այլն), մինչդեռ շաղկապական արժեքը լիովին պահպանվել է: Նմանապես ապա բառի ոչ շաղկապական արժեքները վերացել են կամ խիստ սահմանափակվել, այնինչ շաղկապականը լիովին պահպանվել է: Ինչպես տեսնում ենք, ուրիշ խոսքի մասերից շաղկապների մեջ եկող բառերի պատմական զարգացումն ընթացել է շաղկապական արժեքի պահպանման ու կայունացման ուղիով, որին ղուգրնիաց վերացել կամ նվազել են դրանց այլ խոսքի մասային արժեքները:

Պետք է նկատի ունենալ, որ խոսքի մասային փոխանցման կամ տեղաշարժի այսպիսի ընթացքը պատմական մի կոնկրետ ժամանակաշրջանին հատուկ երևույթ չէ, դա տեղի է ունենում լեզվի զարգացման ամբողջ ընթացքում, և զանազան խոսքի մասերից շաղկապների առաջացումը ոչ միայն գրաբարին է հատուկ, այլև հայերենի զարգացման բոլոր շրջաններին, և սովորաբար դա տեղի է ունենում աստիճանաբար՝ սկզբում համատեղ արժեքներով, իսկ հետո զրանց տարբերակմամբ: Այսպես՝ արդի հայերենում կան շաղկապներ, որոնք հնազույն դրաբարում շաղկապական կիրառություն չեն ունեցել և գործածվել են շաղկապից տարբեր արժեքներով, «բինակ» ու, ու, երբ, այնուամենայնիվ, այսուամենայնիվ և այլն: Բացի այս, արդի հայերենում շարունակ կազմվում են նորանոր շաղկապներ զանազան խոսքի մասերից՝ բևեռ, երբ ու, ինչպես ու, այլապես, հետևաբար, հետևապես և այլն:

Այսպիսով՝ շաղկապների առնչությունն այլ խոսքի մասերի հետ և շաղկապական համակարգի մեջ մանող բառերի տարբեր շերտերի առկայությունն ունի պատմական բնույթ, այն կապված է հայերենի շաղկապական միջոցների առաջացման ու զարգացման պատմական պրոցեսի հետ:

Եթե շաղկապի դեր կատարող բառերից հանենք այն բառերը, որոնց շաղկապական ու ոչ շաղկապական կիրառությունը համառոտ է, առանց իմաստային ու կիրառական տարբերակման, այսինքն՝ հարաբերական բառերը և մի քանի ուրիշ շաղկապական բառեր, ապա մնացածներն այն բառերն են, որոնք հանդես են գալիս որպես բուն շաղկապներ: Այս ձևով որպես շաղկապ զբաղադրում գործածվում են հիմնականում հետևյալ բառերը՝ և, ևս, ևս և, նաև, այլև, ոչ միայն... այլև, ոչ... ոչ, մանաւանդ, մանաւանդ զի, մանաւանդ թի, այս զի, զոնկ, գէթ, քոյ թի, նա, այլ, բայց, բայց միայն, բայց միայն թի, բայց թի, սակայն, սակայն և այնպէս, համայն, համայն և այնպիս, այլ սակայն, բայց սակայն, իսկ, կամ, կամ թի, թի, եթե, թեպետ, թեև, քան, քան թի, որպես, որպես զի, այսինքն, այսինքն է, այսինքն թի, ու է, ապա, ապա ուրեմն, ուրեմն, ուստի, զի, մինչ, մինչև, մինչ զի, միայն, միայն թի, միայն զի, քանզի, վասն զի, այնու զի, փոխանակ զի, որպես թի, որովհետև, իբր զի, իբրև զի, իբրու զի, իբր, իբրև, իբրու, իբր թի, իբրև թի, իբրև եթե, իբր այն եթե, իբրու թի, բա և այլն:

КАТЕГОРИЯ СОЮЗА В ДРЕВНЕАРМЯНСКОМ ЯЗЫКЕ

П. Е. ШАРАБХАНИЯН

(Р е з ю м е)

В статье дается общий обзор союзов древнеармянского языка. В первой части подвргнуты анализу особенности союзов как части речи. Эти особенности характеризуются двумя основными чертами: смысловой и функциональной. Со смысловой стороны союзы от других частей речи отличаются тем, что они выражают не вещественные, а только реляционные значения. Функциональная сторона союзов заключается в том, что они не являются членами предложения, а служат для связи синтаксических единиц. Поэтому они и называются служебными словами. Однако связующую роль играют

и служебными словами являются также и предлоги. В статье показывается отличие союзов от предлогов.

Во второй части статьи рассматриваются вопросы системы и возникновения союзов древнеармянского языка. Союзно-связующую роль играют не только союзы, но и относительные слова— местоимения и наречия, которые, в основном сохраняя свои вещественные значения, одновременно выполняют роль союза. В отличие от союзов, относительные слова выполняют функции какого-либо члена предложения.

Союзы возникают от разных частей речи, имеющих вещественное значение. Слово, относящееся к какой-либо части речи и в то же время выполняющее связующую роль, впоследствии с присущей ему союзно-связующей функцией отделяется от первоначального значения, и таким путем возникают истинные союзы. Такой процесс возникновения союзов от других частей речи подтверждается некоторыми примерами: *գի, այս-սինքն, որ, նա, անհոգի, այլ, կամ* и т. д.